


THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ՔԱՅ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 55

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՆՈՅՆՄԱՐԵՐ 26 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ուաշինգթոնի կը հետադրեն թէ Պոլսոյ Ամերիկեան դեսպանն սկը- ասած է յաջողութիւնն զանել Տաճիկ կառավարութեան քով, իւր ինչ ինչ ձեռնարկութեանց մէջ:

Թուրք կառավարութիւնն ցարդ կը մերժէր կարնոյ և Պարսկադի մէջ Ամերիկեան հիւպատոսներ ըն- դաւելի՛ հակառակ միջոցառոյթն օրի- նաց. վերջի լուրեր կը ծանուցանեն թէ՛ Մր. Ըսթրափի միջամտու- թեամբ՝ Սուլթանը տեղի տուած է վերջապէս Միացեալ Նահանգաց այս արդար պահանջին:

Օսմ. կառավարութիւնը 1869ին մի օրէնք հատաւորութիւնը 1869ին մի օրէնք հատաւորութիւնը իւր հպատակութիւնը ընդունելու ուղղուող ընդհանուր Տաճիկահայաստանի կը պա- ճանջէր նախ իրեն զիմեյ՝ այս մասին արտօնութիւնն ստանալու համար. այս օրէնքին համաձայն՝ առանց հրամա- նի՝ Ամերիկայի քաղաքացիութիւն ընդունող մէկն երբ թուրքոյ վե- րադաւանար, սեղական կառավարու- թեան կողմանէ թրքահայաստակ պի- տի նկատուէր և ըստ այնմ չարչա- րանաց ենթարկուէր: Այս օրէնք, ինչ- պէս գիտեն ընթացողք, շատ ան- պատեհութեանց պատճառ երու, մանաւանդ վերջերս՝ Ամերիկայի քա- ղաքացիք, ընդհանրապէս Հայերը, Թուրքոյ մէջ նեղութեանց գերծ չի կրցին մնալ երբէք, հակառակ Ամերիկեան հիւպատոսներու ընծա- յած ամէն պաշտպանութեանց:

Նախագահ Մաք Քինլի յայտարար լինելով Ամերիկեան քաղաքացիու- թիւնը յարգել տալ աշխարհի ամէն կողմերը, Պոլսոյ Ամերիկեան դես- պանին մասնաւոր հրահանգ տուած էր Տաճիկ կառավարութեան հետ յատուկ ընթացութեան մանեղ՝ այս անիրաւ օրէնքը ջնջելու հա- մար: Մր. Ըսթրափի գիտումներուն և ի հարկէ խիստ լեզուին վրայ, Բ. Գուլը խոստացեր է վերջապէս, այս խնդիրը դադարեցնելու կերպով լուծելու համար՝ նոր դաշնագրու- թիւն մը ներկայացրելով Ամերիկեան կառավարութեան: Թէ ինչ պիտի պարունակէ այս առաջարկելի պայ- մանագրութիւնը, կարելի չէ ըսել, բայց սա գիտենք թէ Հայ քաղա- քացիներու համար նպատաւոր պի- տի ըլլայ՝ հակառակ Սուլթանի ըս- լոր փափաքին, վասն զի Ամերիկե- ան քաղաքացիութիւնն ընդունող Տաճիկահայաստաններու ահազին մե- ծամանութիւնը — եթէ ոչ բոլորը Հայեր են, և հետևաբար այս նոր դաշնագրութիւնը կրնանք տեսակ մը Հայկական դաշնագրութիւն անուանել:

Միացեալ Նահանգաց և Թուր- քի մէջ տեղ առկա մնացած խըն- դիրներու մեծագոյնը այն անվերջ պահանջն է, զոր Տաճիկ կառավա- րութիւնը կը մերժէ վճարել: Մեր գիտցածը, լաւ ևս է ըսել հրապա-

րակաւ գիտցուածը սա է թէ Միա- ցեալ Նահանգներ 125.000 տալար կը պահանջեն Թուրքոյէ այլ և այլ ֆուս- ներու պատճառաւ. բայց տարակոյս չի կայ թէ իրական պահանջը շատ աւելի մեծ ըլլալու է, զի քանի մը Հայ քաղաքացիներու պահանջը միայն 125 հազար տալարի կը հասնի:

Լրագրներու գործածած լեզուին և Ուաշինգթոնի եկած հետազոյի- նայելով՝ նախագահ Մաք Քինլի վերջնականապէս որոշած է այս պահանջներն զանձել այս կամ այն կերպով: Երբ նիւ Օրլինսի մէջ, տարիներ առաջ, քանի մը Իտալա- ցիներ ջարդուեցան, Միացեալ Նա- հանգք անոնց արգականներուն վնաս վճարեցին՝ յանուն արգարութեան. և կը պահանջեն հիմայ որ իրենց քա- ղաքացուց ֆուսը վճարուի նոյնպէս:

Սակայն Թուրքիա իր Ուաշինգ- թոնի դեսպան Ֆէրուհ պէյի միջո- ցաւ այս մասին նորիւնդ պատաս- լան մը տուաւ շարժուա մէջ, որ բոլոր աշխարհի զարմանքն ու պըշ- դանքը շարժեց: Սուլթանի կառա- վարութիւնը կը պնդէ իր պատաս- լանի մէջ թէ, ջարդերու ժամանակ, օտարահայաստակ շատ մը անձերու սուներէն յարձակում եղած է եղեր թուրք զօրքերու վրայ, որով այս վերջինք ծանրապէս ֆուսուած են. և հետևաբար այդ օտարաց կառավա- րութիւնները պարտին թրքաց տու- գանք մը՝ վճարել: Եւ որովհետև այդ տուգանք վճարուած չեն տակաւին, ուստի Տաճիկն ալ իւր տալիքը չը կրնար վճարել: Ինչ իմաստութիւն:

Հետագիրը կաւտէ սակայն թէ Թուրքը պատճառաբանութիւններով եթէ փորձէ նորէն յետաձգել Մ. Նահանգաց այս պահանջներուն վը- ճարումն, Մր. Ըսթրափի հրահան- գով, Ամերիկեան մարտանաւք Թուր- քոյ ջուրերը պիտի երթան ցոյց մ'ը- նելու և նուազանգիտա քաղաք մը գրաւելու համար:

Բոլոր աշխարհ կը խոստովանի թէ սակէ զատ ուրիշ միջոց կարե- լի չէ երևակայել արևելքի յուսա- հատ հոգեւորէն դրամ կրնալ առ- նելու համար. եւ արդէն կարգն ու ժամանակն է հիմայ որ Ընքը Սամ իր երկաթեայ բազուկները ցոյց տայ անոր խաբխուր կառավարութեան:

Կ. Պոլսոյ քաղաքական գեսպան Մ. Բամպուն Սուլթանին ներկայացեր ու մնառ բարեաւի հետ ըսեր է անոր թէ՛ Գաղթա շատ դժգոհ է Հայր Սար- վաթօրն սպաննող չարագործի ազատ արձակուելն ու՝ Սուլթանի հրամա- նաւ՝ նոյն մարդասպանին մեծ պաշ- տօնի անցած ըլլալը տեսնելով, եւ թէ՛ այս և ուրիշ պատճառներու հա- մար Թրանսա որոշած է ուրիշ դես- պան չը զրկել Պոլսոյ: Մ. Բամպուն խնդրած է նաև Սուլթանէն Փարի- զի տաճիկական դեսպանը ետ կանչել: Գաղաքական յարաբերութեանց այս խզումը, որ Ուրլիքմ կայսեր վեր- ջի այցելութեանց ուղղակի մէկ արդ- իւնքն կրնայ սեպուել, հաւանական է ծանրակիր արգիւնք առաջ բերէ արևելքի վեհափառին: Յուսանք:



ՉԵՑՈՒՆ ՍԻՆԱԿԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆՁԱՊԵՏԸ

Յանձնարու մրերէն կը խնդրուի զրամներ կարելի եղածին չափ չու- տով զրկել ընդհ. գանձապետին հե- տեալ հասցէով:

MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY.

Խմբագրութեան կողմէ ընդ- հանուր Գանձապետին յանձնուած \$66.57ի գումարը, որոյ ստացադի- րը առած ենք արդէն, գոյացած էր այլ և այլ կողմերէ մեզ զրկուած նու- էրներով: Այս նուէրներն, որոնք ժամանակին հրատարակուած են ար- դէն այս սիւնակի մէջ, են հետե- կալք. \$7.00 Թրոյէն. \$2.00 Ապահուելի եղարք. \$14.25 Հէվրոյէ, \$25.50 Միլիթրոյէ, \$6.00 նորէն Թրոյէն. \$3.00 Գուզոյեան եղարք, \$1.50 Ալպրեյէ. \$500 Պոսթընէ. 72 սէնթ Լոնտօնէ. \$1.00 վարդ Մանուշակէ. և 60 սէնթ նշան Բուպինեանէ: Ա- սոնցմէ զատ ուրիշ ու է գրամըս- տացուած չ'է տակաւին ՏԳՐԻՍԻ Խմբագրութեան կողմէ:

—Ընդհ. Գանձապետը ցարդ ըս- տացած է.

Table with 2 columns: Item description and Amount. Includes entries like 'Յիշատակի Յանձնարարէն \$41.00', 'Տօլ'րիվըրի » 19.60', 'Սէնթըր Թօլի » 63.52', 'Հալըր հիլի » 50.50', 'ՏԳՐԻՍԻ Խմբագրութեանց 66.57', 'Խմբի կողէն հանգանակուած 30.00', 'Գումար \$270.92'

—Քաղաքի Յանձնարու մը իր անցեալ երեքըթի գիշերուան նիս- տին մէջ իր միայուն զիւանն ընտ- րեց. Տ. Տ. Բէլէկեան Ասենապեա ընտրուեցաւ. Տ. Չիթճեան՝ Ասենապե- պիւր. Տ. Հիւրմիւլը՝ Գանձապետ (Յանձ- նարարին) և Տ. Անտօնեան՝ օգնական Ասենապեպիւր: Ի մէջ այլոց ժողովը որոշեց Գեկա. 17 ի երկուսին Ըսթա- թիլ Բայթ հօլին մէջ մեծ երկույթ մը տալ. և հոն՝ ժողովը կան- խաւ հաւաքուած նուէրներ ա- ճուրդի վաճառել ինպատ Զէյթու- նի. Յանձնարարն այս մասին ինչ ինչ կարգաբարձիւններ ընել վերջ ժողովը փակեց, Ուրաթ երեկոյ նորէն գումարուելու պայմանաւ:

— Ուաշինգթոնի կը լսենք թէ տեղւոյն Հայոց մէջ հանգանակու- թիւն մը պիտի սկսի այս օրեր:

ՍՄԴԻՆ ԱՆԴԻՆ

Քաղաքի Տիկնաց Որբանամ ընկերութիւնն, որոյ այժմեան նախա- գահն է Տիկն Մանկատարեան, իւր վերջի նիստին մէջ որոշեց մեծ նուա- գահանդէս մը տալ այս օրեր:

—Գաղղիական և Հօլանտական շողենաւներն կը լսենք թէ գարննի- նայի բռնուած են՝ հիւանդութիւն ունեցած ըլլալուն համար իրենց մէջ. ուստի նոյն շողենաւներով ե- կող Հայք քաղաքս հասած չ'են տակաւին,

— Անցեալ օր նիւ Եսթը եկաւ Թուրքիան Հայ կաթոլիկ վարդա- պետ մը, Հայր Շիրինեան անունով ու Պոսթոն գնաց: Փառք Աստուծոյ, այս պահանս ալ լրացաւ:

ՊԱՏԱՍՈՒՆՆԵՐ

Ճ. Ճ. Ֆիլասէլֆիա. — Ալաոքա գնացող 7 Հայերը չ'էին ձեր ակ- նարկած արկածի զոհ եղող դըժ- բաղները:

Հ. Հ. Չիքալիս. — Չեր զրկածը ըս- տացած ենք:

Վարչութիւն Լարսոնի, Փրով. — Չեր պատասխանը շատուչ ստացանք:

ԱՂՏ ԼՍՍՐԱՆ

Չիմքի Բօրնը Զօլ, Թիւ 57 Ու. Է. Ի. 25րդ փողոց: Այս կիրակի երեկոյ, ժամը 8:30 Թիւ Ասենապետութիւններ պիտի ըլ- ան ու երգեր պիտի երգուին:

Վարչութիւնը կը խնդրէ ժողո- վրդէն որոշեալ ժամանակին ներկայ գտնուիլ, 10 ու կէսին կրնալ ցրուե- լու համար:

ԿՍՐԻՆՈՐ ԱՂԻՆՐ

Տափն-Թափն մէջ գրեցրային վար- ժարան մը բացուած է Հայ երիտա- տարներու համար. այն ամէն ազ- գայինները որոնք կը փափաքին Անգ- ղիերէն լեզուն սորվիլ թոյ փութան առիթէն օգտուիլ:

Գիմել Հէնրի Ըսթրիկի թիւ 1 Փուպիք Ըսթուլի Յրդ յարկ թիւ 26 սենեակը, ժամը ճիշտ 7:30:

Յովսէփ Փեղիկեան, Պաղատարցի որոյ հասցէն է 44 Միւրըր սթրիթ, Փօրթլէնս, Մէյն. Սըվազի Պաւլազ Գիւզոյցի Ստեփան անուն անձին հասցէն կը փնտռէ, և զիսոցոյներէն կը խնդրէ գրել իրեն յիշեալ հաս- ցէով: Ստեփան ջարդերու ժամա- նակ նիւ Եսթը եկած է իւր կնոջ ու 3 զաւակաց հետ:

Ղազարոս Պարտճեան, 12 Իւսեթիքարը Ըսթրիթ, կը ծանուցանէ թէ Հայերէն ու Անգլիերէն գիր գրող մեքենան 15 սօլարի, իր մրցող պայսիքը՝ 15 սօլարի. 2 ուրիշ ըստ պայսիքըներ 10 և 5 սօլարի պիտի վաճառէ: Գնել փափաքողներն գիմեն յիշեալ հաս- ցէին:



ՇԱՐԱԹՍԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates: 1 year 50, 6 months 40, 3 months 25, 1 month 10. Includes address: To the DICKRIS PUBLISHING CO., 145 EAST 23D ST, New York City.

Մտնող և արտադրող ընկերութեան կողմէն
Մտնող և արտադրող ընկերութեան կողմէն
Մտնող և արտադրող ընկերութեան կողմէն

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻՔ, ՇԱՐԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 26 1898.

ԱՆՁԱՏ ՆԻՒԹԵՐ

Անցեալ շաբթու, Ուրբաթ գիշեր, Սարաճեան Սրբազանն արտաքու կառավարչութեան քաղաքս եկաւ փրօվիտէնէն, ու հետեւեալ գիշեր վերադարձաւ իւր պաշտօնատեղին: Այս անակնկալ այցելութիւնն ու մեկնումը անտարակոյս մի արտաքու կարգի նշանակութիւն կամ պատճառ ունէր, վասն զի ո՛չ ննջեցեալ կար հոս, ո՛չ պոսակ ունէինք և ո՛չ ալ միկրութիւն. և արդէն այս կրօնական պարտականութիւններն կատարելու պատրաստ կղեր ունինք այս քաղաքի մէջ: Սրբազան հօր մեկնելէ քանի մը օր վերջ լսեցինք սակայն թէ Սարաճեան Եպիսկոպոս եկած էր հասարակական կարգի օրհնակ դերը կատարելու համար:

Անթիքոզը կը յիշեն թէ անցեալներն Տ. Ալէքսն, մեր նախորդ Հոգաբարձութեան ծանօթ ստանապետը, պաշտօնանկ եղած էր Կիւլպէնկեան վաճառատունէն՝ հասարակ մահկանացու անօթ պատճառներով, որք ծանրաչիւղ լինելու երեկոթ առին երբ Տ. Կիւլպէնկեան, որ այս ծմեռը Պօլիս անցունել մտադիր է եղեր, քաղաքս հասաւ այս շաբթու. ոմանք—թերևս յոռետեսներ, եթէ կամ իրք—ըսին թէ Տ. Կիւլպէնկեանի այս վաղ վերադարձը յարաբերութիւն ունէր յիշեալ խնդրի հետ, որ, ինչ ալ ըլլար, մեզի համար անկարևոր պիտի նկատուէր, գէթ այժմ, եթէ Սրբազանի հասարակ գալուստը չի հետաքրքրէր զմեզ: Մեր ընդհանուր Հովիւն եկած է եղեր Կիւլպէնկեան տան և անոր պաշտօնադուրի այս պաշտօնէի մէջ եղող խնդրը խաղաղութեամբ կարկաչելու համար:

Սրբազանի այս փութաջանութիւնն գովելի է արդարև. և կը մտածենք որ յաջողի, կամ յաջողած ըլլար իր այս որդեկէր ձեռնարկին մէջ: Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց: Սակայն ի՞նչու աղքատներու մէջ գտնուած, թերևս աւելի ծանրաչիւղ կրիւներ չեն հետաքրքրէր զՍարաճեան Սրբազան: Ուշադրութիւն փողոցի հայ նպարավաճառի ընտանեկան ցաւալի խնդիրը, որ դատարաններու առջև կը քաջքուրի այժմ և որոյ մէջ կրօնաւորի մը միջամտութիւնն աւելի հարկաւոր ու քրիստոնէական է, վաճառականի մը դժուարութեանց չար կարեւորութիւնն ունենալու չէ՞ հասարակաց հօր մը աչքին: Աստուած իմ, արդեօք երկինքի մէջ ալ հարուստին և աղքատին մէջտեղ այնչափ խարութիւն կ'այ. . . :

Սրբազաններու մէջ ենք նորէն. . . որք մեր ու մեր նահատակաց անունը կը շահագործեն ամէն տեղի վերջի խարերան փէնիլիպիոյ մէջ երևան եկած է. անցեալներն Մարմ անուն մէկը Լէյթտուրի եկեղեցիներու մէջ քարոզած ու մեծաքանակ դրամ հանգանակած է՝ հայ կարօտելոց զրկելու և օգնելու պատրուակաւ. և որ աւելի գէշն է, այս խարերան յանձնարարականներ ալ ունի ի ձեռին: Տեղւոյն Հայերը թէև ուշ մնացած են Մարմի ըրած հանգանակութիւններն գաղթեցնելու և բայց յաջո-

րած են խայտառակել անամօթ խարերան: Սա ըսած է Հայոց թէ իր բուն անունն է Առաքել, բայց մտկանունն մոռցած է բոլորովին, իսկ հայերէն լեզուն կորսնցուցած է եղեր իր վեց տարուան պաղտութեան մէջ: Ինչ հըրաշալի բան. ամերիկացիներն խաբելու շափ կարողութիւն ունեցող մէկը վեց տարի աչք իր մայրենի լեզուն ու մինչև անգամ իր ընտանեկան անունը կը մոռնայ. . . :

Մարմ կ'ծիկը դրած հետացած է Լէյթտուրի մէջ՝ ուրիշներ ալ խարելու ֆոսմար:

Սրբազանը մ'ալ քաղաքիս մէջ կայ, զոր ձերբակալութեամբ շանքեր կ'ըլլան այժմ: Նիւ Եօրք ձերբալի պատճառին նայելով այս մարդ, իրեն Հարվըրտէ վկայեալ բժիշկի, տնէ տուն կը շրջի և օգնութիւն կը խնդրէ Հայաստանի մէջ հիւանդանոց մը հաստատելու համար, և կը ջանայ վաճառել կարգ մը արեւելեան սպորտները՝ նոյն նպատակին օգնելու մըտք. այս խարերայն, որոյ անունը արուած է՛ յիշեալ թերթի մէջ, կ'ընէ եղեր նաև թէ մտադիր է քիչ ատենէն իր նոր ընթացաւորտ եղող քրոջ հետ Հայաստան երթալ՝ իր մարդասիրական նպատակը ի գործ դնելու: Շատեր խարութեան են սոսր, որոց մէջ են նաև Էլի քոյրերը, որք 85րդ փողոցի վերայ առանձին աղջկանց վարժարան մ'ունին: Ասոնք երբ կ'ստուգեն մարդուն խարերայ լինելն, նամակ մը կը հրատարակեն տեղական լրագրներու մէջ՝ հասարակութիւնն զգուշացնելու համար. նոյն նամակով Օրք. Էլի ժողովրդին օգնութիւնն ալ կը խնդրեն այդ խարերան ձերբակալելու համար: Այս անամօթը մեզ կը թուի թէ հայ չէ, այլ հայու անունն սակ գործող Սիւրբազանի մ'ըլլալու է այն, որուն ո՛վ ըլլալը ստուգելու համար թէև դիմած ենք Էլի քոյրերուն, բայց պատասխան մը ստացած չենք սակաւին: Մեր ընթերցողներն գործնական բարիք մը ըրած պիտի ըլլան եթէ այսպիսի խարերաններն, ուր որ ալ լինին, ո՛չ միայն խայտառակեն, այլ ջանան արդարութեան յանձնել զանոնք իր խարերայ և գող:

Փրօվիտէնի անցեալ Կիրակի օրուան հանգանակութեան հաւանցաք: Սարաճեան Սրբազանը այս կերպով պիտի ջանար փողովուն սիրելի դառնալ ու ՏԻԳՐԻՍը ամօթով թողուլ իր անխելք խմբագրականներուն համար:

Սակայն խոստովանինք թէ Սարաճեան Սրբազան Ս. Փրօվիտէնից պարտք վերցնած է վերջապէս: Եւ այս ի հարկէ Յովսէփ Եպիսկոպոսի փութաջանութեան կը պատկերբայց կարծելու չէ թէ այս ուրախաթիթ լուր մեզ հաղորդուած է ուղղակի աղբիւրէ, զի Ութըրի առաջնորդարանին դռները գոցուած են մ'եր առջև: Ցաւալի է նաև որ այսուհետև ամէն պաշտօնական ու կարևոր լուրեր Մարմի խայ պիտի զրկուին եղեր. . . : Սակայն վախճանու պատճառ չի կայ. մեր ընթերցողը կրնան վտտահ ըլլալ թէ ամէն կարևոր լուր մեզ կը հասցորդուի մեր թղթակցաց կողմէ, աս միայն տարբերութեամբ թէ պաշտօնականը կցուած չի պիտի ըլլայ լուրին հետ: ՏԻԳՐԻՍի համար փառք մ'է արդարութեան համար հաղածուի:

Ինչպէ՞ս պիտի զրկէք Ձէյթունի դրամը—այս է հարցը որ կ'ուզայ ամէն կողմերէ. ամենէ հետաքրքիրներն անոնք են այս խնդրոյն մէջ որք փարս մ'ալ առուած չ'են այն նպատակին. և ընդհանրապէս այսպէս կ'ըլլայ. դրամ չի սուտըները շատ

խօսելով իրենց պարտականութիւններն կատարել կը ջանան:

Թէև մեր ուղղակի պարտականութիւնն չ'է այսուհետև, քանի որ յանձնախումբ և ընդհ. Գանձապետ կայ—պատասխանել այս հարցումներուն, բայց կարգէ դուրս բան մը չը պիտի ըլլայ, եթէ ըսենք թէ Ձէյթունի համար հանգանակուած դրամներն իրենց նպատակին պիտի դրկուին՝ բոլորովին անկախ ու անկողմնակալ մարդոց ձեռքով՝ կարօտելոց բաժնուելու համար. այս մասին ժողովուրդը թող վտտահ ըլլայ: Այն մարդիկ որոց ձեռքերուն մէջ կը հաւաքուին այս նուէրներն, ցեխին մէջ չ'են նետեր գանձիք:

Ո՛ր են Նիւ Եօրքից կը հարցնէինք դեռ անցեալներն երբ ուրիշ քաղթականութիւններ դրամ կը հաւաքէին Ձէյթունի համար. ոմանք թերևս կարծեցին թէ հայ քաղաքներու ամենէ հարուստն ու ստուարը անտարբեր պիտի մնար անտուաղ Կիլիկիացոց որոտած լիկ ձայնին. բայց ո՛չ, Նիւ Եօրքը կրնար մի քիչ ուշ մնալ, բայց անտարբեր ո՛չ երբէք. և ուրախ ենք այժմ ըսել թէ քիչ ատենէն պիտի կարողանանք քաւել մեր այս ուշ մնալու յանցանքը, —եթէ ներքի է յանցանք մը նըկատել զայն՝ ներկայ պարագաներու սակ—զի Նիւ Եօրքը հազար տուրքէ պակաս պիտի չը կարողանայ գոյացնել Ձէյթունի սովեային բուն համար: Ընթացիկ Բայթ Հօլի մէջ անդի ունենալիք երկկողմէ միայն 500 տուրքէ աւելի հասցի կրնանք ակնկալել՝ սովորական պարագաներու սակ: Յանձնախումբն պատրաստութիւններ սեսնելու վրայ է սրբէն՝ այս հանդէս ակնկալուածին շափ արդիւնաւոր ընելու համար: Հանդիսին մէջ աճուրդի վաճառուելու համար նուէրներ սկսած են արդէն հաւաքել ամէն կողմերէ. և մեծ յոյս կայ որ հայ նուիրատուք այս մասին իրենց բազմազան նուէրներով պիտի դերագանցեն ուրիշ նոյնատեսակ ամէն հանդէսներ:

Յանձնախումբը կը փափաքի ծանուցանել թէ յառաջիկայ աղջային ընդհանուր ժողովոյ մէջ Ընթացիկ Բայթ Հօլի օթեակները, թուով քսան, հանդիսի երկկողմէն համար, պիտի վաճառուին աճուրդով: Օթեակ ունենալ փափաքողներն հաճելու են նորիկայ գանձել: Նուէրներ կարելի է զրկել (ուրիշ քաղաքներէ Լրագրայ խմբագրութեան) առ Տ. Տ. Բէլէկեան, 5րդ ալիւ և 31րդ փողոց:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԳ
Հոգաբարձութեան պաշտօնավարութիւնը լրանալուն առթիւ՝ Բնինչ յանձնախումբ մը ընտրելու համար, Ընդհ. ժողով մը պիտի գումարուի Գեկա. Յ. Շաբաթ երեկոյ, ժամը ճիշտ 8 ին՝ Երբ է վերջի և 23րդ փողոցի անկիւնը Գրամըրսի Լայսիլըմ ժողովարահին մէջ:

Մայրենի Եկեղեցւոյ փառաց նախաձեռնութիւնը ամէն դասակարգի մեր սիրելի աղջայնոց հրաւիր կը կարգանք փութալ իրենց Ազգ. տարեկան տուրքերը վճարել այն ժողովէն առաջ, որ իրաւունք ստանան ընտրութեանց ժամանակ ձայն և քուէ ունենալու: Հոգ. Հայ. Ս. Եկեղեցւոյ Նիւ Եօրք, 20 Նոյեմ.

Պ. Հ. ՃԱՆՃԻԿԵԱՆ
B. H. JANJIGIAN,
NO. 86 HUDSON STREET, BOSTON, MASS.
Պատիւ ունի ծանուցանել թէ ձանձիկեան տունը, որ հանրածանօթ է Արապգիւրի, Ակնայ, Խարբերի, Մալթիայի և ուրիշ քաղաքներու մէջ, երկու տարիէ ի վեր իր միջոցաւ ձեռք մը հաստատած է հոս՝ Փ. գրով դրամ փոխադրելու համար թուրքից: Այս սան ապահովութեան մասին ըսելու ենք թէ ձանձիկեան տան հետ գործ ընող ամէն մարդ գո՛ւ մնացած է: Այս միջոցաւ թուրքից զրկուած դրամը նախ Պօլիս Պօրտ Ընկերութեան Գանձապետ Մր. Փիթի կը զրկուի, և սա անկէ կը յղէ դրամը Խարբերի Մր. Պարմի մ. Տ. Յ. ձանձիկեանի արուելու, ուսկէ ամենայն հաւատարմութեամբ կը յանձնուի կամ կը սուրբ դրամի տէրերուն:

Կը վաճառուին նաև միքով Ֆրէնչ և Հօլընտ շոքեանաւոյն ընկերութեանց ստուներ գոհացուցիչ գններով:
ձանձիկեանի Հաւատարմութիւնը և իւր բոլոր գործերը Պօրտ Ընկերութեան Պօլտոյ գանձապետի Մր. Քիթի հետ ընելու կը հաստատուի. նաև ձանձիկեան տան հետ գործը սղներն կապահովենք: Մ. Հ. ՉԻՉՔՈՔ

ՄԵՐ ԹԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ

(Շարունակութիւն 54 թուէն)

Մեր գլխաւոր թերի թերի կողմերէն մին առ է թէ ամենքս ալ կուզենք բարձր վիճակներու հասնել լոկ մեր անձնական հաճոյքին համար: Այսօր որոշէ նշանաւոր բժիշկ մը լլալ. եթէ քու ազգիդ կամ մարդկութեան բարիք մընել չես միացուցած այդ որոշմանդ հետ, բարեկամ, չարաչար խաբուած պիտի ըլլաս քերականացող երջանկութեան հասնելու:

Եղբի՛ր նշանաւոր բժիշկ. ունեցիր արքայական պալատ, բոլոր գեղեցկութիւններով լեցուր զայն, թող յաճախողներէ բխան ու դրամը աղբիւրի պէս վտանգ, վատահ կելիր թէ չուտով պիտի ձանձրանաս այդ կեանքէն, եթէ նպատակիդ մէջ չես դրած օգնութեան հասնել խեղճուկ ընտանիքի մը որուն մէկ հատիկ գաւազը մահուան անկողնոյն մէջ կը տառապի: Եւտով պիտի ատես այդ արուեստդ ու պիտի ցաւիս անոր համար ըրած զուգուցութիւններու վրայ եթէ նպատակիդ մէջ դրած չես քու ազգիդ զաւակներուն օգնել ու դարման մը գտնել անոնց ներքին ախտերուն որք՝ վարակուած անոնց մէջ՝ նախճիրներ կը գործեն: Որոշէ մեծ հարստութիւն դիզել, ըլլալ փաստագրու մը, ատենախօս մը կամ դատարանի մը: Ասոնց բողոքի կրնաս հասնել թերեւ, բայց երբէք չպիտի գտնես ակնկալածդ իրական հաճոյքն ու երջանկութիւնը եթէ սողալներու կոյսը քու այնպէ մարմինդ պարտապանելու համար միայն դիզուած՝ չեք թար օգնելու խեղճի մը որուն ընթրիքի սեղանին վրայ չոր հացէ դատ բան չի կայ: Գիտցած ըլլաս թէ կեանքի գերագոյն հաճոյքը անձնականին մէջ չի պարտաւորի բնաւ. մարմինէն ու անձէն դուրս կընդարձակուի այն:

Թիրախ որչ՛ափ կործանարար սըխաններու առաջնորդած են մեզ յաջողութեանց վրայ մեր ունեցած սըխալ ըմբռնումները: Եստ անգամ կը տեսնենք փառասուր կառքի մը մէջ ըսողման միլիոնատէրը ու կերտակայնք անոր երջանկութիւնը. բայց ո՛չ, բարեկամ, դո՛ւ՛ հետամտիր անոր կեանքի գաղտնիքը գիտնալու, և տես թէ ինչ սոսկալի երեւոյթներ երևան պիտի գան: Գրամը չի կըրնար երբէք երջանկութիւն տալ քեզ, եթէ լաւ նկարագիր չունին ու ազնուացուցած չես հոգիդ: Բժշկութեան, մեքենագործութեան են կես ալտը քեզ մեր ներքին մարդն ալ հուսադատակց գորգացուցնէք, եթէ ո՛չ, կիտաս կը մնանք ու չուտով կը յուսահատինք կեանքէ:

Մեր մէջ ուրիշ թերութիւն մալ արմատացած է — հակառակութեան ոգին: Տխուր չէ՞՞ գիտնալ թէ մեզմէ մէկ շատերս այրինչ անհատին հետ անձնական հակառակութիւն ունենալով՝ զնացած ենք անոր հակառակ կուսակցութեան մը միանալու, որ մեր համոզումէն չէ: Պատահած չէ՞ շատ անգամ, որ այսինչ խօսքը ըսած ու պաշտպանած ենք, վիճարանութեան մը պահուն, մէկի մը դէմ մեր ունեցած հակառակութեանը հակառակութեանը համար, թէ քեզ այդ պաշտպանած փաստերին երբէք մեր համոզումը չէր. կամ թէ շատ անգամ ըսած չե՞նք բաներ լոկ մէկի մը հաճելի լինելու դիտարկութեամբ եւ որչ՛ափ քամահրելի են մեր ազաչող ու քննող կերպերը երբ գործատիրոջ մը կամ բարձրաստիճան անձի մը հետ կը խօսինք, թերեւ կը մտածենք թէ շատ հաճելի կրնայ երեւի անոնց մեր այդ խոստարհ հո-

գի վարմունքը, բայց ընդհակառակը անոնց ասելութիւնն ու ծաղրանքը կը շարժենք այդ կերպով:

Ըլլանք ճշմարիտ մարդ, ու խօսինք ինչ որ ճշմարիտ է ու արդարացի. թէ և ատեն մեզ առաջին անգամ, բայց չուտով մարդիկ պիտի տեսնեն իրենց սխալը ու պիտի պատուեն զմեզ: Ինչ՞ու մենք զմեզ չի գարգացնենք անգական լեզուի մէջ, որ կարող ըլլանք մենք զմեզ պաշտպանել գիտնալ: Եթէ մեր լեզուն գիտցողի մը հետ ըլլայ խօսակցութիւնիս՝ կրնանք անոր աչքը փորել, բայց լուռ ու անփաստ կը մնանք ամերիկացիի մը առջև, որովհետեւ, այսքան պանդխտութենէ վերջ, գոնէ կանոնաւոր լեզու մալ չենք սորված ի հարկին մենք զմեզ պաշտպանելու:

ԿՍՐ. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ (Մնացեալը յաճողք թուով)

ՀՐԵՍԵ ԽԱՔԵՐԱՅ ՄԸ

Ուսթըր, նոյ. 10 Բանի մը շարաթներ առաջ Հրեայ բժիշկի մը ծանուցումը ունէիք: Սա անձ կը ներկայանար հայ հասարակութեան առջև իբրև պատուաւոր ու կարող բժիշկ ու վիրաբոյժ, ու կը հրաւիրէր Հայերն անձամբ կամ նամակաւ իրեն դիմել:

Այս մարդ, սեղւոյս անգլիերէն թերթերու մէջ ծանուցանելու անօգուտ լինելը փորձելէ վերջ, ուշադրութիւնը դարձուց Հայոց, որք զբերադարբ բանի մը շուտ կը փակին: Ես չեմ մեղադրեր մեր խեղճ ժողովուրդը, որ մօտէն չի ճանչնար այդ անձ ու չի ճանչնար անոր կարողութիւնն: Թերեւ ընթերցողք խորհին թէ բժիշկներն սովորաբար իրարու դէմ կը խօսին. քա՛ւ լիցի որ այդպէս ըլլալ, մանաւանդ այս բացատրի ինչքով մէջ. այս մասին իմ մօտէն ունեցած ծանօթութիւնս ու մեր միամիտներուն խաբուելու նիւթակայ լինելու վտանգն է որ կըստիպան զիս յոտալ գալ ու քանի մը խօսք ըսել:

Նախ՝ այս անձի բժիշկ լինելուն իսկ տարակոյս ու կասկած կայ: Երբ բժիշկ մը տունէ տուն կը շրջի ժողովուրդը համոզելու որ իրեն գանձի քանի թրքերէն բառերով «պանակէլին» կըսէ, որ իրեն համար սրտը գրանցեն՝ շահուն մէկ մասը առնելու պայմանաւ, յայնժամ դիւրին է անոր կարողութիւնը գիտնալ:

Իբրև Հրեայ հրէից տուններէն կը վառուակի, Հրեայ ընկերութիւններէ կարաւորութիւն, ու այս մարդուն արժէքը վար կրնայ իւր ազգայնոց մէջ, իսկ Հայն անոր պահապանը կը կենայ: Պատուաւոր ամերիկացի բժիշկի մը ծանուցումը տեսնուած է թերթերու մէջ: Ո՞վ լսած է մի բժիշկի պայմանագիր կնքելը իր հիւանդին հետ՝ անոր ապաքինութեան համար:

Այնպիսի բաներ կը լսեմ այս մասին, որ սիրտս կը ցաւի: Երիտասարդներ վախի ու երկիւղի մէջ կը մնան եղբի այս բժիշկին առջև, զի վախցնելը լաւ միջոց է դրամ կորզելու: ՏԳԹ. Ա. Գ. ԵՈՒՍՈՒՑ

Այս հրեայ բժիշկի մասին ստացած ենք ուրիշ քանի մը նամակներ ալ, որք կը նկարագրեն անոր ինչ ինչ պատարակելի արարքները. չենք հրատարակել զայնս վստահ ըլլալով թէ ՏԳԹ. Եւսուստի նամակը բաւական է մեր ազգայինները զգուշացնելու համար: Ծ. ԽՄԲ.

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Շիքակո, Հոկտ. 29 Արմէնիաի 14, 15 և 16 թիւերուն մէջ հրատարակեալ «Անտեղի տըր տունըներ»-ու յօդուածագիր Ագրիպպայաւ, խնդրոյ մը վրայ իմաստակորէն կը ճոռումարանէ առանց սակայն ուսումնասիրած ըլլալու նոյն խընդիրը:

Ամէն կարգաւ գիտցողներու կը յանձնարարեմ կարգաւ այդ յօդուածը:

Ամէն անոնք որոնք անձամբ կը ճանչնան զՅ. Ագրիպպայաւ, տարակոյս չունիմ թէ զայրութեամբ պիտի լեցուին անոր դէմ... որպէս այսօր ամպի պէս կը գոռայ Չիքակոյի Հայը այդ տգէտ յօդուածագիր զԼիւին... Իր դրածները չըպիտի կրկնեմ... վասն զի կը խորհիմ թէ «Տիգրիս»-ի սիւնակները այնչափ աժան չ'են... որպէս է «Արմէնիա»-ինը, այլ միայն քանի մը գլխաւոր կէտերուն պատասխանելով, պարտքս կատարած պիտի համարիմ...:

Ով «Անտեղի արտունջներ» Յօդուածագիր, լսէ՛. այն ամէն Հայերը որոնք յաջողելու համար կուգան յԱմերիկայ, անոնք երբէք որեւէ արտունջ մը չունին... իսկ հասարակ զասակարգին ունեցած արքունուցը տարբեր է, ու ոչ թէ անտեղի անսակէն...:

Հայ ժողովուրդը չը գար յԱմերիկայ այն հասկացողութեամբ, ինչ հասկացողութեամբ որ կուգան ուրիշ ազգեր դէպ յայս լարելիութիւն երկիրը... գաղթական Հայուն աչքին առջև սիւսուած են ամէն երկիրներ, բայց Հայաստանի անունն, ծնողաց, դաւակ, կնոջ և բարեկամաց անունները թմբուկի ձայնէն շատ աւելի բարձր կը հնչեն Հայի սկանջին ամէն օր: Ամերիկայ դաղթող օտարագրները շատ կարճ ժամանակի մէջ կը ձուլուին տեղացի ժողովուրդին հետ. ատոնք իրենց հայրենիքը կը կոչեն Ամերիկան. ու այս քաղաքակրթեալ երկիրներու գրնչունները՝ ներկայիս իրենք և ապագային իրենց սերունդը մեծ օգուտ ունին երկրին, անոր կը վերաբերին... Այսչափ բաւական...:

Բայց անոնք Հայը Յային հետ: Յոյնը անհամեմատաբար շատ դիւրութիւններ ունի գալու յԱմերիկայ, ու դառնալու իւր ազատ հայրենիքը ևլն. քան զՀայը... Կարճ խօսքով, այն օրէն երբ Հայը մեծ ճիգով այս երկիրը ոտք կը դնէ, պարտք կ'զգայ օգնել իրեններուն որոնք ամէն ժամանակ կարօտ են... և արդէն այդ իսկ պատճառով պանդուխտ է Հայը... ուր մնաց որ նա դրամ վստակի, և վստարկածը փորձի ենթարկէ:

Ա. ԱՁՍՏԵԱՆ

ՉՈՒԱՐՃԱՆԻՔ

ԸՆԹԵՐՑԱՍԻՐ ՊԱՐՈՆ ՄԸ

—Սարգիս, ի՞նչու ՏԻԳՐԻՍ չես կարդար հիմայ.

—Ի՞նչ գիտես որ չեմ կարդար.

—Որովհետեւ երկար ատենէ ի վեր չես գներ.

—Չեմ գներ, որովհետեւ գործակալը ազէկ չի վարուել հետս. եւ սակայն ի՞նչ հարկ աւելի փարս տալու. վերջ՝ տուաքը կը գնեն հատ մը ես ալ կըրթամ կը կարգամ:

Մանչէսթըր. ԱՐՈՒՍԵԱԿ

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

Պ. Նազարէթ Թադէոսեա Փըրօվիտէնէ կը ցաւի որ արիւն ուայ Հայրենիքին մոռացած՝ գիրեար կը դատարիտենք, և թէ վիճարանութեան այս կերպ շարունակուելը փոխանակ օգտակար ըլլալու վստակար պիտի ըլլայ: Թող Պ. Լեւոնեան վարագոյրին ճոթերը վար իջնցունէ, և թող Պ. Չիքակոյի ամբաստանելէ ու պատուոյ ատենան մը կազմելու կերպին վրայ գրենք ու խօսինք: Իմ կարծեօք լաւ կը լինի եթէ Դըրօզակեաններն ու Հնչակեանները իրենց կողմէ 3 կամ 5ական անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրեն այս խնդիրը կերպով մը կարգադրելու պաշտօնով. և երբ ատենան կազմուի ու ամպեր մէկգրի ըլլան, անտան կամ կը պոռանք թէ Արիար մասնիչ մէ, կամ Դրօզակ՝ զրպարտիչ մը:

Պ. Լեւոն Լեւոնեան, Նիւ Եորքէն, կը հարցնէ թէ Արիար ինչո՞վ մատնիչ է: Յարգ մէջ բերուած փաստերը «ըսի, ըսաւ, կըսէին»-ի վրայ հիմնուած կը գտնէ: Վարագոյրի ճոթերուն ետև փոխանակ տօքումանները գըտնելու Մարտը կը գտնէ ու կը զարմանայ: Վարագոյրի չի բացուած ճոթերը բացէք, կըսէ, թերեւ անոնց ետև պահուած ըլլան տօքումանները: Բայց թշնամի մը իր թշնամիին ամէն բան կըսէ. միթէ անոնց հաւատալու է:

Հայկ Ապահ Արիարի գործունէութեան ներքող մը կարգաւոր կը կ'սկսի իր նամակ. Եւսուստիաններն ու Կիրճեաններն ինչ որ գառոյնով չի կրցան ընել, սկսեցին ամբաստանութիւններով կատարել փորձել: Սա ալ տօքումաններ և պատուոյ ատենան կը պահանջէ, և եթէ Արիար յանցաւոր գտնուի, վստահ է թէ Հնչակեան մահաւորութեան պատրաստ է անոր համար:

Նոյն յօդուածագիրը ուրիշ նամակաւ մը Հայրենիքի 906 թուին մէջ արտատպուած թարգմանութենէ մը կտորներ մէջ կը բերէ չարախօսութիւն վերանագրով. ահաւասիկ նմոյշ մը. «Չարախօսութիւնը կը ծնի շարմարեթէ, որոնք կը յուսան մինչև իրենց խոսակցեցնել զքեզ. կամ ողորմելի նախանձորներէ որոնք կը նըկըրտին զքեզ հաւատացնել քիչ մը փայտալս իրենց անձին» Պ. Շարլը Հէմօն կ'ըսէ «պարագա տեղը ինքզինքդ տանջել ու յոգնեցնել է չարախօսութեանմը աղբիւրը փնտաւելու երկր» պէտք է ըմբռնել թէ ժամանակը արգարագատ մեծ դատարար մըն է, որ մարդիկն ու իրերը իրենց տեղը կը դնէ»:

ՀԱՅ ՅԱՏԱՍԽՈՐԴՆԵՐՈՒՍ

Կը ծանուցանեմ թէ ի դիւրութեան Պ. Ստեփանեան ամէն երեկոյ ժամը 6էն մինչև 8 պիտի ծառայէ իր հայրենակիցներուն:

Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ «Ուիտզըր Հէր վիկըր» անուն հրաշալի մագի գեղը պիտի ծախենք շիշը 50 սէնթի: Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակներն մէջ լաւագոյնն է մագերը գորացնելու, բուժելու և նախնական գոյնը պահպանելու համար:

Տակաւ մը գուտ նորվեկեան ձուկի իւղ բերել տուած եմ, որոյ լիպրան 45 սէնթի պիտի ծախենք:

Դեղագիրներն կը պատրաստուին աժան և թարմ գեղերէ: Փորձեցէք: ՈՒՆՏՍՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

Մաքս Հանսպըրկ 472 Յրդ ամբիւ, Նիւ Եորք:

S. & N. D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Բ

Հին և նոր ամէն տեսակ զէնքերու, Գաղղիական զոհարեղէններու թէ՛ իրական և թէ՛ նմանութիւն: Կը վաճառեն արեւելեան և տաճկական ամէն տեսակ սեղանազորներ, սեղանի, գաշակի, մէնթըլի ևն. ծածկոցներ ոսկեթել և մետաքսահիւս: Դամասկի մետաքսէ և մանածէ վարագոյրներ, Հալէպի աղապանի, քէֆրաներ ևն. Հայ անհատներ ինչպէս նաև Հայ խանութպաններ ու վաճառականներ երբ պէտք ունենան այս կարգի ապրանքներու, 10 առ 100 շահելէ զատ, գոհ պիտի մնան այս ծանօթ վաճառատունէն գնելով: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք ճշտիւ կը կատարուին:

ՊՈՒՂՂՈՒՐ - ՊՈՒՂՂՈՒՐ - ՊՈՒՂՂՈՒՐ

ՊԱՆՏԱՍՏԱՐ ԲԱՇՏԱՆԵՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co.,

53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արդոյ Հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ՝ Հասարակութեան մ' պատրուարի և ծեծածի գործարան մը վերադարձնող անուան տակ: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն զիւրաւարտելի գնեցող կը վաճառուին, այլ և մտքուրթեան ու տեսակի կողմէ անհամեմատ ընտիր են ուրիշներէ:

Կանութպաններու Համար խոշոր կամ մանր պուլըրի փառնետը կարծէ 3 սէնթ, իսկ տուններու Համար 3 1/2 սէնթ: Տուններու և ճաշարաններու Համար զիւրաւարտելի տալու նպասակու որոշուած է մինչև 25 փառնետ քանակութեամբ ապրանք վաճառել: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշտիւ կը կատարուին:

Փորձեցէ՛ք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Վճարումներն կանխիկ կըլլան: Ճանապարհի ծախսը գնողին վրայ է:

ՊՈՒՂՂՈՒՐԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ.

BULGUR MANUFACTURING CO.

161 Union St, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատև փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլըրը մեծ ընդունելութիւն գըտած է ամէն տեղ: Առանց քարի և անասնորձ հտտի Պուլըրը ամէն Հայ տունէ կը փնտռուի: Մենք, որ միակ Պուլըրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախորդք եթէ գոհ չի լինին մեր ապրանքներէն զրամին ետ կը տրուի, թէև ցայսօր ոչ մի Հայ տնտեսութիւն յայտնած է: Մեզ Համար կը վկայեն Հայ տիկիներ:

Պուլըրի լիւրան կարծէ 3 1/2 սէնթ խանութներու և ճաշարաններու համար. իսկ տուններու համար 4 սէնթ: Յանձնարարութիւնք ճշտիւ կը կատարուին: Փոխադրութեան ծախսը գընողին վրայ է:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս ապրանքի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցետոմս, նամակագրութիւն, հրատարակիչ, շրջաբերականներ, տետրակներ ևն.: Մեր գները գոհացուցիչ են. տրպարութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ԲԱՇՏԱՆԵՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ց Ա Գ Ո Ր Ծ ԵՒ Մ Ս Ս Վ Ա Ճ Ա Ռ

573-579 ԲԷՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ ԲԷՅՄՊՐԻՃ, ՄԱՍՍ.

Պատիւ ունի ծանուցանել արդոյ Հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գնի և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ո՛չ կը փշրի և ո՛չ ալ թթու է: 1 փնտ. հացը 3 սէնթ միայն կարծէ: Միւսը միշտ թարմ է ու գները գոհացուցիչ: Կը վաճառէ նաև ածուխ, քարիւղ և քիմիկալներ փայտ: Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և աճան: Մանաւոր կառք ունի տուն փոխադրելու համար, խիստ աճան գնով: Փորձեցէ՛ք անգամ մը:

ՅՄԱՌԲ ԲԱՐԱԿԵԱՆ

Ամերիկեան և Արևելեան ընդհանուր նպարավաճառ-Կրօնըրիս,

Թիւ 45 Էքսչէնճ փողոց, Ուսթըր:

Կը ծանուցանէ թէ՛ գներու չափաւորութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանցէ ուրիշ նպարավաճառներէ:


MARK C. MEAGHER,

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՆՈՒԱԾ ՄԵԾԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

\$1.00

Շաբաթական արվարձանով մի տունի տեղ ի Մուրէյ, Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Սա տեղը ծովի մակերևոյթէն 120 քառ. քարձրութիւն ունի, ուր 34րդ փողոցի Ֆէրրիէն Հինգ սէնթով կերթցուի 19 րոպէէն: Այս Հողերը տեսնել փոխադրանքներու երթելու ժամանակ համար ձրի տամ կը տրուի: Երթալ ուղղութիւն ամեն շինգչաբար և կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Լոնկ Ասյընտի Ֆէրրիէն առջև, Իսթ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տամ ստանալ Տ. Ս. Եարարմանէ, որոյ Հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:



ԲԱՆԱՍՏԵՂՉՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հըրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փոխադրող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարելու, կէքթըրթթայի շինելու և տպագրելու ծախսերն վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ոտանաւորատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գըրել լրագրոյս իմբագրութեան:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Ա Ռ Ա Ջ Ն Ա Կ Ա Ր Գ Դ Ե Ր Չ Ա Կ :

Թիւ 628 Յրդ Աշուի, Նիւ Եորք:

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ընտիր կերպասեղէններէ վայելուչ Հագուստներ կը շինէ զիւրաւարտելի գներով:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Յերորդ Տպագրութիւն

Մաքսուէլ Սըմըրվիււ


Հրատարակիչ

Կը բողկանայ 25 մեծագոյն Հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գինն է, կտուեայ կազմ 62 տող. 50 սէնթ կէս կաշիակազմ 87 " 50 " փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 սոյար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս սոյար, իսկ վերջինին՝ 4 սոյար:

Այս Համագրութեան Ամերիկեան միակ արտոնեալ տպագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար զիւրաւարտելու իմբագրութեան:



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ,

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք:

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աճան գներով: Մեր Հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսպրուած կոշիկներ կը կարենք ձևադրել և վայելուչ կերպով: Կը նորոգենք Հին կոշիկներ չափաւոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կոշիկներ \$1.25 մինչև \$5.00 Կանանց " \$1.25 " \$2.50 Տղացոց և աղջկանց կոշիկներ \$0.50 " \$1.50

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՍԻ ԴԵՂ



HIRSOLA A HAIR FOOD FEEDS, STRENGTHENS, CLEANSES AND ADORN THE HAIR. DESTROYS ALL DISEASES OF THE SCALP AND REMOVES DANDRUFF. IT NEVER FAILS! Because it is not a mere mixture of oil and water, but a solution of ingredients of Oriental herbs, which science has demonstrated to be safe, pure and beneficial. MANUFACTURED BY H. KOORIE & CO., New York.

Կը գործցնէ, կը մաքրէ, կը փայլեցնէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բուսական և սաղմոսային արժէքը գիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի Հոտով:

Կը ծախուի րոտոր գեղազորունքուն քով: Հին 50 Մէնթ միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութեան:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, Թիւ 45 Էքսչէնճ ըսթրիթ, Ուսթըր, Մասս:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵԾԱԳՈՅՆ ԱԿ (Հօրէյլ) ՎԱՃԱՌԱԿԱՆԲ

Արևելեան և Տաճկական Ապրանք Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու ետք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ սեղանազորներ, սեղանի, մէնթըլի, փոխապի ևն. մետաքսեայ և ոսկեթելէ ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆրա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել իրանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրներն չափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո' և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ: